**Արձանագրություն N 2**
**ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար շրջանակային համաձայնագրով տպագրական աշխատանքների ձեռքբերման «ՀՀ ԱՆ ԾՀԱԾՁԲ-15/3-2016/2» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան «17» «Սեպտեմբերի» 2016թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Վ.Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ Մ.Մխիթարյան, Լ.Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար Հ.Մնացականյան

### *1. Ընթացակարգի հայտերի բացման մասին*

---------------------------------------------------------------------------------

***(Վ.Հակոբյան)***

Ընդունել ի գիտություն, որ.

07.09.16թ. armeps համակարգով ծանուցվել է «ԳԱԿ-ԾՀԱԾՁԲ-15/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրեր կնքած կազմակերպություններին, որոնցից հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Կազմակերպության անվանումը | Հասցե |
|---|---|---|
| 1 | «Հայկարլի» ՍՊԸ | ք.Երևան, Կիևյան 18/6 |
| 2 | «Յասոն» ՍՊԸ | ք. Երևան, Վրացական 16 |
| 3 | «Միսմա» ՍՊԸ | ք. Երևան, Հանրապետության 49, 7/1 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:***

### *2. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին*

---------------------------------------------------------------------------

***(Վ.Հակոբյան)***

«Հայկարլի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, իսկ մնացած կազմակերպություններինը՝ ոչ, չի պահպանվել ՀՀ կառավարության 10.02.11թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետի պահանջները /հայտերը ներկայացնելիս փաստաթղթերը չեն հաստատվել էլեկտրոնային թվային ստորագրությամբ/:

«Միսմա» և «Յասոն» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերը մերժվել են:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:***

### *3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին*

----------------------------------------------------------------------------------

***(Վ.Հակոբյան)***

Մասնակցի կողմից ներկայացված ծրարում առկա է հրավերով պահանջվող փաստաթղթերը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *4. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացված հայտերի գնահատման և ամփոփման մասին*

---------------------------------------------------------------------------

### *(Վ.Հակոբյան)*

«Հայկարլի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *5. Մասնակիցների առաջարկած գների մասին*

---------------------------------------------------------------------------

### *(Վ.Հակոբյան)*

Ընդունել ի գիտություն, որ.

«Հայկարլի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները ներկայացվում է ստորև.

| **Անվանումը** | **Չափի միավորը** | **Միավոր գին** | **Քանակ** | **Գումար** | **«Հայկարլի» ՍՊԸ** | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | միավոր գին առանց ԱԱՀ | գինը առանց ԱԱՀ | գինը ԱԱՀ-ով |
| **Պատվաստումների ազգային օրացույցի պաստառի տպագրություն** | **հատ** | **500** | **2 500** | **1 250 000** | **390** | **975 000** | **975 000** |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *6. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին*

---------------------------------------------------------------------------

### *(Վ.Հակոբյան)*

Հարցումներ չեն եղել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### *7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին*

---------------------------------------------------------------------------

### *(Վ.Հակոբյան)*

Հիմք ընդունելով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որոշվեց նիստը կասեցնել և «Հայկարլի» ՍՊԸ-ին հրավիրել բանակցությունների, որը կկայանա ս/թ սեպտեմբերի 22-ին ժամը 16:00, ՀՀ առողջապահության նախարարություն, հասցեն՝ ք.Երևան, Կառավարական տուն 3, 2-րդ հարկ, նիստերի դահլիճ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0։

Հանձնաժողովի

Նախագահ՝ ------------------------ Վ.Հակոբյան

Անդամներ՝ ------------------------ Մ.Մխիթարյան

------------------------ Լ.Սարգսյան

Քարտուղար՝ ------------------------ Հ.Մնացականյան